ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2023 թվականի N 244 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Կառավարչական հարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը, 2014 թվականի օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում ձեռք բերված գույքի շահագործումը ծրագրի պահանջներին համապատասխան ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերի համապատասխան համայնքներում/բնակավայրերում

ստեղծված «արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին ժամանակավոր պահատվության հանձնված՝ 314 498 000 (երեք հարյուր տասնչորս միլիոն չոր հարյուր ինսունութ հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կոոպերատիվներին՝ համաձայն N 1 հավելվածի, կոոպերատիվների կանոնադրական խնդիրներին համապատասխան՝ տվյալ համայնքում անասնապահության զարգացման նպատակով օգտագործելու պայմանով:

2. Պետական սեփականություն հանդիսացող՝ 18 388 000 (տասնութ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար) դրամ ընդհանուր սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների, ամրացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին՝ ծրագրի պահանջների իրականացման նպատակով:

3. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին թույլատրել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքն անհատույց օգտագործման իրավունքով, նպատակային օգտագործման համար հանձնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքում և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակի համայնքում գտնվող անասնաբուժական սպասարկման կենտրոններում մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան չափորոշիչներով ընտրված անասնաբույժներին:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման N 1 հավելվածում նշված գույքի նվիրաբերության մասին պայմանագրերի կնքումը համապատասխան կոոպերատիվների հետ և պահատվության պայմանագրերի լուծումը.

2) սույն որոշման N 1 հավելվածում նշված գույքի հանձնման-ընդունման գործընթացի իրականացումը.

3) սույն որոշման NN 2 և 3 հավելվածներում նշված գույքի անժամկետ, անհատույց օգտագործման մասին պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ:

5. Նվիրաբերվող գույքի նվիրաբերության պայմանները սահմանել նվիրաբերության մասին պայմանագրերում՝ ծրագրի պահանջներին համապատասխան՝ դրանցում նախատեսելով, որ գույքը նվիրաբերության պայմաններին անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերողն իրավունք ունի պահանջելու նվիրաբերության վերացում:

6. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին հանձնվող գույքի օգտագործման պայմանները սահմանել պայմանագրով:

7. Սույն որոշումից բխող հաշվառումներն իրականացնել որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրերի կնքումից հետո երկամսյա ժամկետում:

8. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական տեխնիկայի և բեռնամարդատար ավտոմեքենաների պետական հաշվառումն իրականացվում է համապատասխան կոոպերատիվի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ